Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի <<Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21.10.2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ար. Գրիգորյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 29 028 100 (քսանինը միլիոն քսանութ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ԱՍՔՄԵԴԴիզայն>> ՍՊԸ	28 400 000	-	28 400 000
2	<<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	-	-	-

դ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշել է կասեցնել 15.10.2019թ. նիստը և հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 17.10.2019թ. կայացած նիստին գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

ա) <<ԱՍՔՄԵԴդիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում- (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)>> լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր,
- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր,

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և ծանուցել <<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 21.10.2019թ.: <ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

բ) <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից armeps համակարգում չեն կցվել հրավերով նախատեսված փաստաթղթերը (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ Հավելված N1, հրավերով նախատեսված լիցենզիա և ներդիրներ, գնային առաջարկ՝ Հավելված N2):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացրած գնահատման թերթիկները և Կարգի 42-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց՝ <<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար, իսկ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ	բավարար
-	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ-ին, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով

ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան